

## ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

### ԱՆԻՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կրկնությունն ուղեկցում է ոճականորեն չեզոք հաղորդմանը և հուզական կամ գնահատողական-վերաբերմունքային իմաստ է հավելում լեզվական միավորների բուն կամ առարկայական նշանակությանը, ծառայում է ասույթի հուզարասհայտչական երանդավորմանը: Լեզվական միավորների կրկնությունները իրավիճակային կիրառություններ են, որոնք կանոնական ձևերին իրենց հաճախականությամբ զիջում են, իսկ ներգործման ուժով գերազանցում: Կրկնությունն առավել համակողմանիորեն է արտահայտվում հայերենի շարահյուսական մակարդակում: Այս մակարդակում կրկնությունն իրացվում է որպես նախադասության անդամի կամ անդամների մեկից ավելի անդամ արտահայտվելու իրողություն: Ընդամիս, եթե բառական մակարդակում արմատի կամ բառի կրկնվելը միևնույն կաղապարում բառական (ներառյալ իմաստային) նշանակություն է ունենում, իսկ ձևաբանական մակարդակում այն ստանում է ձևաբանական արժեք, ապա շարահյուսական մակարդակում կրկնությունն ունի շարահյուսական քերականական-կառուցվածքային, իմաստային-ներբերանդային և առավել ևս ոճական նշանակություն: Եվ շարահյուսական մակարդակում իրացվող կրկնությունները բաժանվում են երեք խմբի՝ քերականական, ոճական ու իմաստային:

Քերականական կրկնությունները շարահյուսական տարբեր միավորների կրկնություններն են նշանակյալ հասկացություններն առավել ճշգրիտ ու ընդգծված արտահայտելու համար: Այսպիսիք են ենթակայի, ստորոգյալի և երկրորդական անդամների կրկնությունները տարբեր կառուցվածքի նախադասություններում, նախադասության հարակից միավորների, բարդ նախադասության բաղադրիչների, ինքնուրույն նախադասությունների, անդամ ամբողջական պարբերությունների կրկնությունները, երբ դրանք հավելյալ իմաստ հույզ ու արտահայտչականություն չեն դրսևորում: Ընդ որում այդ կրկնություններից ամեն մեկը հաճախ խոսք է ներմուծում քերականական-կառուցվածքային որևէ աարր:

Ընդհանրապես շարահյուսական մակարդակում քերականական կրկնության քննությունը սլահանջում է տարբերակված մոտեցում, մանավանդ որ պարզ և բարդ նախադասություններում կրկնությունն ունենում է տարբեր իրացումներ. այդ կառույցներում տարբեր է ոչ միայն կրկնության իրացման ձևը, այլև նսլատակը: Եթե պարզ նախադասության մեջ կրկնության նսլատակը տվյալ անդամի իմաստի ընդգծումն է, այդ իմաստի կարևորության փաստարկումը, ապա բարդ նախադասության մեջ դրան հաճախ ավելանում են նաեւ բաղադրիչ նախադասությունների սպասարկու-կապակցական դերը, ոճական շատ ավելի լայն դործառույթը: Ա-

վելացնենք նաև, որ մի կողմից Հաճախ նախադասություն անդամի կրկնությունն է ազդում շարահյուսական տվյալ կառույցի կառուցվածքի վրա, մյուս կողմից երբեմն էլ նախադասության կառուցվածքային ու իմաստանրբերանդային որևէ յուրահասակություն է պայմանավորված լինում տվյալ անդամի կրկնությունը: Բոլոր դեպքերում կրկնությունը նպատակ է, խոսողի (գրողի) որոշակի միտումի դրսևորման արտահայտություն է: Բերենք օրինակներ՝ «Այսօր ոչինչ չկա, ոչինչ» (ՎՍ, 1, 38): «Ոչ մի ձագ, ոչ մի ձաղ ծվի կեղևից չի բաժանվում ողբով» (ԵՁՊԲ, 456): «Եվ համբուրեց Լիլիթի աչքերը, և համբուրեց հոնքերն ու թարթիչները» (ԱԻ, 3, 199): «Ալբիանոսի տոհմը ուներ յուր խորին անցյալը և յուր վաղեմի ավանդությունները» (ՐՍ, 204):

Շարահյուսական միավորների կրկնությունն ամենատարբեր նպատակներ է հետապնդում: Նախադասության անդամներից ամեն մեկի կրկնությունն իրացնում է այդ նպատակներից մեկը: Այսպես՝ «Կիտարկենք Հետևյալ նախադասությունը. «Որքան մաշվել էր այդ ըրդմահոգ գեմքը, որքան դունաթափվել էր» (ՐՍ, 420): Այս բարդ համադասական նախադասության երկու բաղադրիչների սկզբում որքան չափի պարագայի կրկնությունն սանդղծում է համաչափ կշռություն, ընդդեմ է լրացյալ ստորոգյալների նշանակությունը, արձակ խոսքը բաժանում է երկու չափական հատվածների այն դարձնելով ռիթմիկ: Իսկ, օրինակ, հետևյալ քառատողում դործառվող կրկնությունն ունի բոլորովին այլ նպատակ.

«Խառնել բոլորն իրարու,  
Տանել ծվեն առ ծվեն,—  
Քսմու կոչումն, ի՞նչ արած,  
Քսմու պաշտոնն է այսօր» (ՀԱԲԵ, 78):

Այս համադասական պարբերությունի երկրորդ կրկնությամբ արտահայտված եղբր բացահայտչի դեր է կատարում. պարզաբանում է առաջին եզրի իմաստը սուբյեկտի ինչ լինելը մեկնելու ձևով:

Հաճախ էլ նախադասության մեջ կրկնությունը ստանում է ճշգրտող նշանակություն. ինչպես՝ «Կուսակցական կյանք, ավելի նեղ, թայֆայական կյանք — թշնամու բանակների պես կանգնած իրար դեմ մինչև էն պստիկ ես-ր...» (ՀԹ, 430—431): Այստեղ կյանք բառը երկրորդ անգամ արտահայտվել է ավելի նեղ և թայֆայական վճռորոշ որոշիչ լրացումները նախադասության բովանդակության ծիր մտցնելով կուսակցական կյանք հասկացության իմաստն ավելի ճշգրիտ բնութագրելու համար: Երբեմն էլ շարահյուսական կրկնությունը պայմանավորված է լինում ճարտասանական հարցմամբ՝ այդ հարցումն ավելի ընդգծելու, ներհակ վիճակների հասկացությունն ավելի խորացնելու համար. օրինակ՝

«Ախր մեղք չկար, ո՞վ էր մեղավոր»,—  
Նույն հարցն է տալիս քո նամակն էլի...  
—Ո՞վ էր մեղավոր, նա էր մեղավոր—  
Անմեղությունն այն ժամանակների...» (ՀՍ, 2, 38):

Առաջին երկտողը սոսկ ճարտասանական հարցում է, որին անսպասելիորեն հետևում է հարորդ երկտողով արտահայտված պատասխանը: Բոլոր դեպքերում, անկախ կրկնության կոնկրետ նպատակից, կրկնվող անդամը

կազմում է նախադասության առանցքը իմաստային ու ձևային առումներով: Վերը նշված դեպքերում առկա է նախադասության կաղապարում արտահայտվող քերականական կրկնությունը, որը բնականաբար ուղեկցվում է իմաստային կրկնությամբ, քանզի այս դեպքում էլ առկա է ձևի և բովանդակության ներդաշնակությունը: Պատահում է նաև հակառակը, երբ կրկնությունը սոսկ իմաստային է: Սա առկա է աստիճանավորման դեպքում, երբ ոչ թե տվյալ բառն է կրկնվում, այլ նրա իմաստը հանձին նախադասության հետագա շարադրանքում տվյալ բառի համանիշ կամ նույնանիշ ձևի արտահայտության: Բանադարձման այս արտահայտությունը իմաստային կրկնությանը, կանգնադրառնանք հետո:

Ոճական կրկնությունը շարահյուսական միավորների այն կրկնությունն է, որն արտահայտում է խոսողի (գրողի) հույզերն ու ապրումները, ակտիվ վերաբերմունքը խոսքը դարձնելով ներգործող, արտահայտիչ ու սրակերպավոր: Շարահյուսական միավորների քերականական կրկնությունը դառնում է նաև ոճական կրկնություն, երբ այն միտված է լինում ասելիքը զգացական, պատկերավոր ու արտահայտիչ դարձնելուն: Այս դեպքում, որպես կանոն, կրկնյալը մեծ մասամբ ոճականորեն չեզոք է կամ ոչ նշանակիր, իսկ կրկնորդը նոր տեղեկություն չի պարունակում, այլ լինում է իրադրական կամ իրավիճակային գործածություն և հիմնականում ոճականորեն երանգավորված է, նշանակիր. այն արտահայտում է խոսողի զգացական կամ դնահատողական վերաբերմունքը, և հուզական իմաստը դառնում է նրա հավելիմաստը: Հետևաբար շարահյուսական կրկնություններն ավելի շատ ծառայում են մարդկային հույզերի, ապրումների իբրև հիմնական կամ տրամաբանական հաղորդմանը գուցե ավելի հավելիմաստների, դրսևորմանը: Նման դեպքերում շարահյուսական կրկնություններն աներկրայորեն ունենում են ոճական նշանակություն: Սա ավելի ցայտուն երևում է չափածո խոսքում: Այսպես՝

«Տարիներս, տարիներս,  
 Ո՛ւր մնացին տարիներս,  
 Կանաչ-կարմիր,  
 Սև, սպիտակ տարիներս,  
 Իմ սառն ու տաք,  
 Ծուռ ու շիտակ  
 Տարիներս, տարիներս:  
 Ո՛ւր գնացին խեղճ ու կրակ,  
 Ոտաբոբիկ տարիներս,  
 Իմ թևավոր, իմ թևաբեկ  
 Տարիներս,  
 Իմ սիրավոր,  
 Իմ ձիավոր  
 Տարիներս ո՛ւր մնացին» (ՀՄ, 2, 50)

Մարգկային որպիսի՝ թախիժ, կարոտ, կորստյան անամոք ցավ ու ավստասնքի զգացումներ են արտահայտված այստեղ ընդգծված կրկնությունների շնորհիվ: Ընգամենը տարիներս բառի և ո՛ւր մնացին տարիներս

ճարտասանական հարցում արասհայտող նախադասության հմուտ կրկնությունը մարդկային մի ամբողջ կյանք է արտացոլում:

Ոճական կրկնությունը լեզվի շարահյուսական մակարդակում շատ ավելի լայն ընդգրկում ունի: Եվ դա ընական է. կրկնությունը միաքը ընդգծված ու պակերավոր արտահայտելու և անմոռաց դարձնելու անփոխարինելի միջոց է: Հաճախ այն տվյալ բովանդակության դրսևորման շարահյուսական համանիշ ձևերի մեջ ամենանախընարելի տարբերակն է լինում շնորհիվ այն լանի, որ այստեղ շատ ավելի, քան նրա համանիշ մեկ այլ ձևում, ցայտունորեն երևում է խոսողի (հեղինակի) վերաբերմունքը: Ահա թե ինչու լեզվաարտահայտման այս հնարանքին գրողներն ավելի շատ դիմում են այն դեպքում, երբ խիստ կարեւորություն են տալիս իրենց ասելիքին ցանկանալով ընթերցողի ուշադրությունը հրավիրել տվյալ հարցի վրա: Այսպես՝ Բաժնի Արարատյան դաշար նկարագրելիս գրում է. «Ամբողջ հովիտը ծխում, գոլորշիանում էր: Ցողադարձ բուսականությունը ետ էր տալիս երկնքին յուր ընդունած մարդարտյա կաթիլները:

Ծխում էին և դաշտավայրի վրա խիտ առ խիտ սփռված դյուղերը: Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ, կապտագույն ծխին, որ ամեն առավոտ օձապտույտ սյունակներով վեր էր բարձրանում խրճիթների դմբեթաձև երգիկներին: Այդ ծուխը, սև մառախուղի նման, ծածկել էր դյուղերը, և մերթ ընդ մերթ նրա մթին թանձրության միջից փայլասակում էին հրային կայծեր...

Ծխում էին և մեծաչեն քաղաքները: Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը... Եվ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ դեղեցկությունը» (ՐՄ, 439):

Այս հատվածում ծուխ և ծխել բառերը խորհրդանշում են չարագործ ձեռքի ավերումը, շենչող երկրի մոխրանալը և իրենց առատ գործածությունամբ ամբողջացնում են հայոց երկրին սլատուհասած աղետն իր տխուր հետևանքներով: Մանավանդ «Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը» ստորոգյալի կրկնությունը նախադասությունը կատարյալ է դարձնում հայրենի երկրի ողբերգությունը և այդ կապակցությամբ հեղինակի ապրած ցավն ու տառապանքը: Վկայակոչված նախադասությունը կարելի է արտահայտել մեկ այլ համանիշ տարբերակով բազմակի ենթականերով և ընդհանուր ստորոգյալով պարզ նախադասությամբ. «Ծխում էին Դվինը, Արտաշատը, Վաղարշապատը, Էջմիածնի վանքը»: Սա փաստի, իրավիճակի անկողմնակալ արձանագրում է, որտեղ չկա նախորդ նախադասության շեշտադրումը թե՛ կացություն խորքային ու պակերավոր նկարագրության և թե՛ հեղինակի ակտիվ վերաբերմունքի դրսևորման առումով:

Կրկնության հավելյալ նրբերանդր կամ հավելիմաստը հաճախ ձեռք է բերում գնահատողական բնույթ, երբ խոսքն ունենում է ընդգծված հուզարտահայտչական երանդ: Սա առավել բնորոշ է առօրյա-խոսակցական, դեղարվեստական ու հրապարակախոսական ոճերին: Շարահյուսական մակարդակում կրկնության հուզադնահատողական երանդը հիմնականում պայմանավորված է լինում ենթատեքստի պայմաններով ու պահանջներով

և ունենում է սուբյեկտիվ բնույթ՝ խոսողի (գրողի) նպատակագրման հետ կապված: Այս մակարդակում բառի կրկնությունը՝ որպես նախագասության անդամի կրկնության իրացում, հաճախ պարզապես ոճական գործառույթ է, որը հատկորոշվում է համատեքստում ձեռք բերած արտահայտչականությամբ: Եթե բառական մակարդակում կրկնության իրացման արդյունք հանդիսացող կրկնավոր բարդության ոճական երանգավորումը բառիմաստի մաս է և ունի կանոնական բնույթ, ապա շարահյուսական մակարդակում կրկնության ոճական գործառույթը շատ հաճախ ոչ թե կանոնական է, այլ ձեռքբերովի՝ պայմանավորված խոսքի նպատակադրմամբ: Այսպես՝ «Պիտի վեր կենամ ես այս առավոտ ու գնամ այնտեղ ու գնամ մեր տուն» (ՎԴԱՄ, 47): Այս նախագասության առանց կրկնության տարբերակը կամ շարահյուսական համանիշ ձևն է. «Պիտի վեր կենամ ես այս առավոտ ու գնամ այնտեղ մեր տուն»: Առաջին հայացքից թվում է՝ սրանք բովանդակությամբ նույնն են, բայց իրականում դրանց միջև առկա է իմաստային մեծ տարբերություն: Երկրորդ նախագասությունը սոսկ մի պարզ հաղորդում է միևնույն անձի կողմից անհրաժեշտաբար կատարվելիք երկու գործողությունների մասին, իսկ առաջին օրինակում պիտի գնամ ստորոգյալի կրկնության շնորհիվ նախագասությունը ստացել է նոր բովանդակություն՝ դառնալով բոլորովին այլ հաղորդում: Այս նախագասությունն արտահայտում է մարդ անհատի ու նրա կորուսյալ հայրենիքի անխզելի կալը, կորուսյալ հայրենիքը վերագտնելու ու նրան փարվելու, հայրենական տան կաթողին կարոտն առնելու լուսավոր գաղափարը: Եվ այս վիթխարի զգացական բովանդակությունը նախագասության իմաստային դաշտ է ներմուծվել ստորոգյալի ընդամենը մեկ կրկնությամբ:

Շարահյուսական մակարդակում իրացվող կրկնությունը գեղարվեստական խոսքում երբեմն էլ ծառայում է մարդկային հոգեվիճակի դրսևորմանը, լեզվական ոճավորմամբ գեղարվեստական կերպարի տիպականացմանը: Այսպես, օրինակ, «Գիքորը» պատմվածքում Գիքորի մայրը ընդամենը մի նախագասություն է ասում. «Զեմ ուզում իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարհքը մի դցիլ, չեմ ուզում...» (ՀԹ, 261): Այստեղ չեմ ուզում ստորոգյալի կրկնորդական կրկնությամբ հեղինակն արտահայտում է մոր ապրած ողջ անհանգստությունը, նրա սրտի տագնապները: Ստորոգյալի կրկնությամբ հատկորոշվող այդ մի հատիկ նախագասությամբ մայրը մնում է հետագա գեպքերի զարգացման կենտրոնում. նա արցունքն աչքերին որդուն ուղեկցում է նրա ամենատխուր պահերին՝ անիծելով անիրավ աշխարհը: Եվ մարդկային այս ողջ հոգեբանական վիճակն ապահովվում է ստորոգյալի մեկ կրկնությամբ:

Կրկնությունը, բառական ու քերականական իրողություն լինելով հանդերձ, լեզվի համակարգում ավելի շատ ոճական երևույթ է, որը և կանխորոշում է դրա հաճախական կիրառությունը գեղարվեստական ու հրապարակախոսական խոսքում: Ակներև է, որ գեղարվեստական խոսքի ամենաբնորոշ հատկանիշները՝ պատկերավորությունն ու արտահայտչականությունը, ապահովվում են լեզվական որոշակի միջոցների ու հնարանքների, լեզվահորինվածքային պռանձին ձևերի գործադրումով, որոնց շարքն է դասվում նաև կրկնությունն իր բազմապիսի դրսևորումներով: Ընդհան-

րապես շատ մեծ է կրկնության տեսակարար կշիռը Հայերենի պատկերավորության ու արտահայտչականության միջոցների շարքում: Ավելին, գեղարվեստական խոսքի պատկերավորության ու արտահայտչականության միջոցներից շատերը պայմանավորված են լինում կրկնությամբ, կառուցվում են կրկնության հիմքի վրա: Եվ կրկնաբերության արվեստի սկզբունքների կիրառմամբ ստեղծված չափաձո խոսքում ութմական միավորները մեծ մասամբ լինում են կրկնվող բառերը, որոնք դառնում են ասույթի իմաստի և հոգարտահայտչական լարվածության կրողները, նպաստում են խոսքի հնչյունական ներդաշնակության ու արտահայտչականությանը, խոսքի մեջ ներմուծում են երաժշտության տարրեր՝ անկախ կրկնվող բառի շարահյուսական դործառույթից:

Գեղարվեստական պատկեր ստեղծելուն նպաստակամիտված բառակրկնությունը միատարր չէ՝ պայմանավորված բանատողում կրկնվող բառի դիրքով, համատեքստի դեղագիտական պահանջներով և այլ հանգամանքներով: Արդի Հայերենում առավել տարածված են կրկնության բանավարձման հետևյալ դրսևորումները՝

ա) Հարակրկնություն կամ նույնասկիզբ: Կրկնաբերության արվեստի ամենապարզ և հնագույն դրսևորումն է, որ հատկորոշվում է բանաստեղծական տան տողերի առաջին բառերի կրկնությամբ և չափաձո խոսքում երևան է դալիս բազում տարբերակներով. օրինակ՝

«Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ,

Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի,

Աղմկում է մինչև լույս, գանգասովում է վարանոտ

Ու ժամերն է հաշվում իմ, վայրկյանները մի առ մի» (ԵԶ, 1, 307):

բ) Վերջույթ կամ նույնավերջ: Հարակրկնության հակառակ բանադարձումն է՝ բանաստեղծության կից տողերի վերջում նույն բառի կամ բառակապակցության կրկնությունը, որ հանգես է դալիս անընգմեջ կամ միջարկված շարահաստությամբ: Վերջույթային կրկնությունն ուժեղացնում է խոսքի հոգականությունն ու երաժշտականությունը, նաև ծառայում է հանդավորմանը. ինչպես՝

«Մոլորվել եմ, ճամփաներին ծանոթ չեմ,

Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ,

Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ» (ԱԻ, 1, 352):

գ) Կցուրդ: Չափաձո խոսքում բանաստեղծական տողի վերջին բառի կրկնությունն է հաջորդ տողասկզբում: Այս կրկնության նպատակը սովորաբար հասկացությունը ընթերցողի ուշադրության կենտրոնում պահելն է և համանվագայնություն ստեղծելը. ինչպես՝

«Քանի ձեռքից եմ վառվել,

Վառվել ու հուր եմ դառել,

Հուր եմ դառել, լույս տվել

Լույս աալով եմ ըստառվել» (ՀԹ, 67):

\* Այստեղ չենք անդրադառնում թվարկվող արտահայտչամիջոցների փոփոխականներին, դրսևորման յուրահատկություններին, այլ սահմանափակվում ենք դրանց համառոտ բնութագրությամբ:

դ) Հանգույց: Սա շարահյուսական կառույցում հարակրկնության և վերջույթի համատեղումն է. *ինչպես*՝

«Հազար ու մի գիրք կարգացի-խելացի դիրք չտեսա,

Հազար կնկա գիրկն ընկա, սիրեկան գիրկ չտեսա» (ԵՉ, 1, 235):

ե) Պարույթ: Սա հիմնականում ութաողյա բանաստեղծության տրիոլետի մեջ առաջին բանատողի կրկնությունն է իբրև չորրորդ և յոթերորդ տողեր և երկրորդ տողի կրկնությունն իբրև ութերորդ տող. օրինակ՝

«Մանուշակագուլյն մշուշների մեջ

Երգեր են շաչում արտույտները էլի,

Հասարակ աչքին անտեսանելի

Մանուշակագուլյն մշուշների մեջ:

Անվերջ կլսեմ այդ երգերն, անվերջ,

Թող ոչ մի աղմուկ հոգիս չավերի...՝

Մանուշակագուլյն մշուշների մեջ

Երգեր են շաչում արտույտները էլի» (ՀՍ, 2, 176):

զ) Օվակ: Սա այն բանադարձումն է, երբ աաղաչափական կամ շարահյուսական միավորը սկսվում և վերջանում է միևնույն բառով կամ արտահայտությամբ: Ամենահաճախապես քառատողի շրջանակում դործառվող օղակային կրկնությունն է. *ինչպես*՝

«Սա իրիկունն ըլլայի ես

Եվ հպվեի ճակատին ամեն անցորդի.

Ջքնաղագեղ ու նվաղուն համուրդի

Սա իրիկունն ըլլայի ես» (ՄԵԺ, 112):

է) Հակադրություն կամ հակադրույթ: Կրկնվող բառի հակադիր իմաստով լրացումների զուգորդմամբ արտահայտվող բանադարձումն է: Հակադրությունն ավելի է խորանում, երբ կրկնյալ և կրկնորդ ստորոգյալներին զուգակցում են այլ հականիշ ստորոգյալներ. *այսպես*՝

«Աչխարհում միշտ բաց են եղել

Դռներս կրնկի վրա.

Ելնողին չեմ ասել արի,

Մտնողին չեմ ասել զնա» (ՀՍ, 2, 50):

ը) Համեմատություն: Սա տվյալ դեպքում բառակրկնության հիմքի վրա երկու կամ ավելի առարկաների, երևույթների համեմատությունն է՝ մեկը մյուսի նմանությամբ կամ տարբերությամբ բնութագրելու նպատակով. *ինչպես*՝ «Ուղղամիտ էին աստվածները հին, Ուղղամիտ էին՝ Պարզ դերձակի պես...» (ՊՍ, 4, 246):

թ) Խաչաձևում կամ կաչակերպ: Շարահյուսական փոխատեղման հիմքի վրա խոսքի երկու հատվածների կամ միավորների հակադրության համատեղումով կառուցվածք է, որի նպատակը միտքը հակիրճ և բովանդակալից արտահայտելն է. *ինչպես*՝

«Տուր ինձ քո հոգին, որ ես շառաչեմ.

Որ ես դադարեմ հանգիստ հոսելուց,

Ինձնից խոսելուց քեզնից չամաչեմ,

Ինձնից չամաչեմ քեզնից խոսելուց» (ՀՍ, 2, 257):

ժ) Զուգապատկույթյուն: Սա նախադասույթյան (արձակ թե չափածո) վերջին բառի կրկնությունն է հաջորդի սկզբում: Ինչպես՝ «Կես ժամվա մեջ նրան ասես ամենաշատը մի վայրկյան: Մի վայրկյանն ի՞նչ է, որ մի վայրկյանի տված զգացմունքն ինչ լինի» (ՀՄՕ, 76):

ժա) Բառախալ: Նույն կամ նման արտասանությամբ և իմաստով տարբեր բառերի, արտահայտությունների սրամիտ ղուգակցումն է հեզնելու կամ ծիծաղաշարժ իրադրություն ստեղծելու նպատակով: Ինչպես՝

«Գիտի կործանել,  
Բայց և... գործ անել...  
Նա պիտի զարկել  
Ու գրկել գիտի,  
Բայց գիտի գրկել  
Ու փրկել գիտի» (ՊՍ, 1, 405):

ժբ) Խոհանոցություն: Սա անվանական դերագրաս անդամի կրկնությամբ կազմված անհանդույց խոսքն է խորքային բովանդակությամբ ու զգացականությամբ օժտված: Այսպես, օրինակ, Հ. Սահյանի «Քարը» բանաստեղծությունը, որ բաղկացած է աասնմեկ տնից, ամբողջովին կառուցված է խոհանոցության սկզբունքով: Ահավասիկ 1-ին քառատուր.

«Քարը երամ, քարը նախիր,  
Քարը հոտ,  
Քարը հոտաղ, քարը հովիվ,  
Քարը հող» (ՀՍ, 2, 211):

ժգ) Բազմաշաղկապություն: Միևնույն շաղկապի հաճախական գործածությունն է, կրկնությունը խոսքին հանդիսավորություն ու վեհություն հաղորդելու, զգացականության պատրանք ստեղծելու նպատակով: օրինակ՝

«Ես պարզ տեսնում եմ մեր ապագան  
Եվ սլացքներում մեր վիպական,  
Եվ մեր երգերում անապական,  
Եվ մեր խոհերում խորունկ այնքան,  
Եվ խաղերում իմ խելոք մանկան,  
Եվ մեր տենչերում քնարական...» (ՀՍ, 1, 87):

Կրկնությամբ ձևավորված արտահայտչամիջոցները, իհարկե, նշվածներով չեն սահմանափակվում: Կան կրկնությամբ արտահայտված նաև այլ արտահայտչամիջոցներ (թատերացում, պիտակություն, բազմալծություն, բազճյուսում, շղթայակցում, դարձ, նախաբերություն, բացադարձություն, պարզելացիա, բաշխում և այլն), որոնք շատ ավելի սահմանափակ դրսևորումներ ունեն արդի հայերենում:

Իմաստային կրկնությունը շարահյուսական միևնույն կառույցում նույն իմաստի դրսևորումն է լեզվական հարիմաստ ձևերով և կրում է աստիճանավորում անվանումը: Սա ևս լեզվի շարահյուսական մակարդակում իրացվող ոճական հնար է, խոսքի արտահայտչական հնարանք ասելիքն ավելի պատկերավոր և վերաբերմունքի ընդգծումով արտահայտելու համար: Դժանի որ հարիմաստ կամ համանիշ բառերը և ընդհանրապես լեզվական համանիշ ձևերը շարահյուսական կառույցում իրար հաջորդում են ի-



մաստի կամ ուժեղացման, կամ թուլացման և կամ էլ հավասար դրսևորման կարգով, ուստի աստիճանավորումը լինում է երեք տեսակ:

ա) Բարձրացող, երբ հարիմաստ բառերից վերջինը նախորդի իմաստը սասակացնում է, ուժեղացնում. ինչպես. «Խոր դերության ներքո, այնուամենայնիվ, Պատմության քառուղիներում ոլորաստույա, Պայքարել է ուղով, մաքառել է նա միշտ, Եվ չի կորել գաժան տարիներում այն մութ...» (ԵՁՊԲ, 478):

Հաճախ բարձրացող աստիճանավորումն արտահայտվում է ոչ թե բառական, այլ շարահյուսական-նկարագրական եղանակով թվարկվող դեպքերի գույների խտացումով. օրինակ. «Գյուղում հարյուր տեղից թրատվեց փողոցների ձյունածածկը, հարյուր տեղից դողանջեցին, միացան իրար, Վարդուշի գուանը դարձան լիճ» (ՄԳՁՄ, 125):

բ) Իջնող, երբ համանիշ բառերը նախադասության մեջ շարադասվում են իմաստի թուլացման հերթագայությամբ. ինչպես՝ «Բորբոքվեց, գուրգուռայ, մութմութաց, ապա լուեց»:

Իջնող աստիճանավորումը, իմաստային կրկնություն լինելով հանդերձ, երբեմն էլ արտահայտվում է քերականական-շարահյուսական կրկնության ու համանիշության զուգորդմամբ: Սա առավել բնորոշ է բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասությունը. ինչպես՝ «Ավդիի փափախը փոշու է ու փոշու գույն ունի, բաճկոնը փոշու գույն ունի, ուսապարկին փոշի կա» (ՄԳՁՄ, 141):

գ) Հավասար, երբ միևնույն կառույցում համանիշ բառերը լինում են իմաստով հավասարաբեք, ունենում են իմաստի դրսևորման համարժեքություն, լիակատար կամ մոտավոր հավասարություն է լինում նրանց միջև. ինչպես՝ «Մենք գիտում էինք քարացած, սարսափած աչքերով նայում, երբ հանկարծ մոտեցան նրան երկու այր՝ դեմքերով կավիճ» (ԵՁՊԲ, 492): «Նա այդ հարցի շուրջը երկար ժամանակ մտածում էր, խորհում, մտորում»: Նման կառուցվածքում իմաստային կրկնությունը ավելի է ընդգծվում, երբ նախադասությունը լինում է հարցական երանդի. ինչպես՝ «Եվ ինչպե՞ս էր մոռացել, այդպես պայծառ մի արշալույս, այդքան դեղեցիկ մի պատկեր ո՞նց էր մտահան արել» (ՄԳՁՄ, 268):

Բարդ համադասական նախադասության մեջ հավասար աստիճանավորումն արտահայտվում է նաև ոչ բառական կամ նկարագրական եղանակով. ինչպես՝ «Սև մաղ չես ճարի, ճերմակ են նաև կրծքի մազերը» (ՄԳՁՄ, 141):

Ավելացնենք նաև, որ հաճախ բարդ նախադասությունը չի սահմանափակվում աստիճանավորման նշված ձևերից որևէ մեկով: Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասության մեջ երբեմն էլ համատեղում են աստիճանավորման երկու արտահայտությունները՝ բարձրացող և իջնող աստիճանավորումները: Դիտարկենք հետևյալ նախադասությունը. «Էլ ինչո՞ւ միայն նա երգե - Թող երգեն, ինչքան մարդ որ կա, Թող աշխարհը ամբողջ երգե, Ջրնգա, Ջնգա, Ջնգա...» (ԵՁՊԲ, 100): Այստեղ 1-3 բաղադրիչ նախադասությունների կրկնվող ստորոգյալների՝ երգե, երգեն, երգե և 4-րդ բաղադրիչ նախադասության զրնգա ստորոգյալի միջև գործառնվում է բարձրացող աստիճանավորումը. բոլորի երգի միավորումն է

աստեղծում զրնգալը, որին հաջորդում է նույն իմաստի աստիճանական թուլացումն ազդարարող զնգա, զնգա ստորոգյալների հերթագայությունը: Այսինքն՝ 1-3-րդ և 4-րդ բաղադրիչ նախադասությունների միջև դործառվում է բարձրացող աստիճանավորումը, իսկ 4-րդ և 5-րդ բաղադրիչների միջև իջնող աստիճանավորումը:

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

- ԱԻ – Ալ. Իսահակյան. Երկերի ժողովածու. հ.հ. 1,2, Երևան, 1973, 1975:  
 ԵԶ – Ե. Չարենց. Երկերի ժողովածու. հ. 1, Երևան, 1962:  
 ԵԶՊԲ – Ե. Չարենց. Պոեմներ, բանաստեղծություններ. Երևան, 1984:  
 ՀԹ – Հովհ. Թումանյան. Ընտիր երկեր. Երևան, 1978:  
 ՀՍ – Հ. Սահյան. Երկեր. հ.հ. 1,2, Երևան, 1984:  
 ՀՍԲԵ – Հ. Սահյան. Քարափների երգը. Երևան, 1968:  
 ՀՄՕ – Հր. Մաթևոսյան. Օգոստոս, Երևան, 1967:  
 ՄԵԺ – Մ. Մեծարենց. Երկերի ժողովածու. Երևան, 1981:  
 ՄԳԶՄ – Մ. Գալչոյան. Չորի Միրոն. Երևան, 1983:  
 ՊՍ – Պ. Սևակ. Երկերի ժողովածու. հ. 1, Երևան, 1972:  
 ՎԴԱՄ – Վ. Դավթյան. Անկեզ մորենի. Երևան, 1972:  
 ՎՍ – Վ. Սարոյան. Ընտիր երկեր. հ. 1, Երևան, 1986:  
 ԲՍ – Բաֆֆի. Սամվել, Երկերի ժողովածու. հ. 7, Երևան, 1956:

СИНТАКСИЧЕСКИЕ ПОВТОРЕНИЯ В СОВРЕМЕННОМ  
 АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АНДРАНИК КАРАПЕТЯН

Р е з ю м е

Повтор сопровождает стилистически нейтральные сообщения и служит многокрасочности и выразительности слова. Синтаксические повторы делятся на три группы: грамматические, стилистические и смысловые. Из них более существенную роль играет стилистический повтор, который выражает эмоции и чувства автора, делает слово выразительным и образным. Многие средства образности и выразительности художественного слова обуславливаются повторением слов, строятся на основе повтора. В современном армянском языке более распространены следующие фигурные виды повторов: анафора, концовка или эпифора, эпаналепсис, симплока, кольцо, антитеза, сравнение, хиазм, каламбур, полисиндетон и т.д.